

եւ փառայն յանձնէ զնա մոլայի միոյ ընթերցողի, առ ի կրթել զնա յաղանդ իւրեանց. իսկ ուրացեալն հմուտ աղանդոյ նոցա, ինքն կրթիչ լինի մօլային: Յետ այսորիկ զնայ անտի ի խնուս առ փառան խնուսայ եւ ասէ ցնա թէ ես տաճկացայ եւ այժմ կամիմ հայ լինել, տալ քեզ խարաճ եւ բազում շինութիւն առնել զաւառի քում: Իսկ փառայն թոյլ տայ նմա հայանալ եւ ամուսնանալ, եւ բռնութեամբ փառային ձեռնադրել քահանայ ի յառաջնորդէ սուրբ Կարապետու. եւ սկըսանի նոր օրէնս քարոզել, եւ այլի քահանայից տայ ամուսնանալ վերստին, աշխարհականաց հրաման տայ առնուլ երկուս եւ կամ երիւս կանայս, եւ երրորդ՝ զամենայն պահս բառնայ բաց ի քառասնորդաց պահոց, ասելով թէ այս միայն զտանի յաւատարանի: Չայս ամենայն լուեալ Ղուկաս կաթողիկոսին, հնարիւք ինչ ըմբռնեալ է զնա եւ տարեալ է յէջմիածին (ոմանք ասեն առ ի սպանանել), եւ անտի փախուցեալ վերստին եկեալ է ի խնուս եւ այժմ նստի ի Տուման գեղջն եւ առնէ տէրտէրութիւն: Պատմեն թէ երկուս եւ կամ երեք գիւղք յաղանդս իւր զարձուցեալ է»³¹:

Նամակին թուականն է 1793, հոս կը վերջանայ մեր ծանօթութիւնը Յովհաննէսի մասին: Գրիգորեանի յօդուածին մէջ յիշատակուած աղբիւրներուն համաձայն, Յովհաննէս արդէն իսկ սպանուած է մինչեւ 1793 Հոկտեմբեր թուականը, մինչ Մէհէրեանի ինքնակենսագրութեան համաձայն, դեռ մինչեւ 1801 թուականը Յովհաննէս կենդանի է: Անկարելի չէ որ Մէհէրեանի յիշատակած թուականը գրիչի սխալ մը ըլլայ, որովհետեւ այն բոլոր մանրամասնութիւնները որ կը գրէ ինքնակենսագրութեան մէջ Յովհաննէսի մասին, իր 1793 Փետր. 2ին գրած նամակին մէջ արդէն իսկ պատմած է ու ի՞նչ մէկ նորութիւն կ'աւելցնէ 1793-1801 տարիներուն մէջ պատահած գէպերուն մասին:

31. Դիւան Ս. Ղազարի, 1793, Փետրուար 2:

Բացի ասկէ, Մէհէրեան 1793-1801 տարիներուն միշտ գտնուած է Պոլիս ու Կարինի շրջանակներուն մէջ, ու զարմանալի կերպով ոչ մէկ նորութիւն կը գրէ Յովհաննէսի մասին. նմանապէս կարելի չեղաւ գտնել որեւէ նորութիւն ու մանրամասնութիւն Ս. Ղազարի գիւսանին մէջ՝ այդ շրջանի նամակներէն, որոնք գրուած են ժամանակակիցներէ՝ Պոլիսէն, Կարինէն ու խնուսի շրջանակներէն:

Յովհաննէս մշեցիի կեանքին վերաբերեալ այս բոլոր մանրամասնութիւնները տալէ ետք, որ գլխաւոր նպատակն էր մեր ներկայ յօդուածին, իբրեւ զարակացութիւն կ'ուզենք ըսել հետեւեալը. թէ եւ բանասէրներէ կը կարծուի թէ այս Յովհաննէս մշեցին ըլլայ հեղինակը «Բանալի ճշմարտութեան» գիրքին, սակայն մենք անկարելի կը գտնենք այս ենթադրութիւնը, եւ առանց վարանելու կ'ուզենք հաստատել թէ տարբեր Յովհաննէս մը պէտք է ըլլայ այդ գիրքին հեղինակը, հետեւեալ պատճառներուն համար:

«Բանալի ճշմարտութեան» բնագիրին գրչութեան թուականը, ինչպէս որոշ գիտենք, 1782 է, երբ դեռ Յովհաննէս մշեցի կը գտնուէր Պոլիս, ու չէր սկսած իր աղանդը քարոզել ու տարածել: Թողունք որ յիշուած աղբիւրներէն կը տեսնուի թէ Յովհաննէս անկարող լինէր անձ մը եղած է, որով դժուար է որ նման անձ մը կարենայ պատրաստել ու գրել մեղոտիկ վարդապետութիւն մը ու զայն քարոզել:

«Բանալի ճշմարտութեան» գիրքին մէջ իբրեւ հեղինակ նշանակուած է «Ամենապայծառ Յոհաննէս Վահագունի», նոր մակդիր մը որ ամենեւին չենք գտներ Յովհաննէս Մշեցիի համար: Ու դեռ իբրեւ վերջին ապացոյց մը կրնայ ծառայել Ս. Ղազարի գիւսանին ու Մէհէրեանի բացարձակ լռութիւնը՝ նկատմամբ «Բանալի ճշմարտութեան» գիրքին, որ ամենեւին չ'ընծայեր զայն իրեն ծանօթ Յովհաննէս մշեցիին:

Հ. ՍԱՀԱԿ ՃԵՄՃԵՄԵԱՆ

ՄԵՂՔԻ ԵՒ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ

Գ. ՆԱՐԵԿԱՅԻԻ ՔՈՎ

Նարեկը՝ հին միայնակեցական հոգեւորականութեան ամէնէն աւելի արժէքաւոր վաւերացութեան մէկն էր համարուի: Սուրբ եւ ցաւի հոգեւորականութիւնն է, թէ եւ ոչ տարամբեօրէն: Արեւելեան հոգեւորականութիւնը ճոխ է մատենաներով, աղօթքներով եւ շարժականներով, որոնք բոլորն ալ միեւնոյն նիւթը կը շօշափեն. անձին մեղքերուն ամբաստանումը: Արեւմուտքի մէջ հետաքրքրական պիտի ըլլար Ս. Անսելմոսի մտածականներէն քանի մը հատ կրկին կարգաւ. Գրիգոր Նարեկացիի աղօթքներուն նոյն շէտը եւ նոյն ողբերգականութիւնը կը կրեն, թէ եւ Ս. Անսելմոսով զարգացական (սկոլաստիկ) աստուածաբանութիւնը կը սկսի: Հոգեբանական տեսակէտով՝ Անսելմոս նոր մարդ մը կը յայտնուի. մարդ մը՝ որուն հեղուկիւնը եւ անձը դուրս կը ցայտեցնեն զինք՝ իր եւ զինքը կանխող ժամանակներու մարդոց շարքերէն:

Գրիգոր Նարեկացին, ընդհակառակը, Գրիգոր Նարեկացուցիչն է ցաւի հոգեւորականութեան՝ որ զընդմէջ եւ արցունք: Նարեկին հիմնական նիւթը՝ իսկապէս մեղքի ամբաստանումն է. մարդս ինքնազգիքը Աստուծոյ առջեւ կը գնէ. Աստուծոյ առջեւն է՝ ընդունելու համար Անոր դատաստանը. ուղղակի դատապարտութեան դատաստան մը չէ, այլ գլխաւորապէս դատաստան մը՝ որ մարդուս կուտայ մեղքի գիտակցութիւնը, իր անձին խեղճութեան խոր համոզումը եւ անգարմանի կործանումի մը ըմբռնումը: Մարդկային խեղճութեան տեսութիւնն է սակաւ, որ ամէն երգի մէջ կը կրկնուի. սպաւորիչ է. անսահման եւ անյատակ

խեղճութիւն մըն է. ներկայ են բոլոր մեղքերը, եւ բոլորը կը ներկայացունեն՝ իրենց նենդութեան մէջ մատնանշուած, իրենց կործանարար փորձառութեան ապրումով:

Մեղքի տեսութեան շարունակական կրկնումը կը գեղեցկացնէ՝ բայց նաեւ կը ծանրացնէ այս քերթուածը. ամբաստանութեան եւ լացի անգագար եւ անվերջանալի կրկնումը՝ կրնայ ձանձրացնել, կրնայ յոգնեցնել, բայց ասիկա ալ Նարեկին կուտայ իր յատուկ շէտը, ներշնչումի միութիւնը եւ իր վեհութիւնը:

Գ. Նարեկացին շարունակաբար կարգաւ դժուար է. այնպիսի մեծութիւն մը ունի՝ որ ուրիշ բանաստեղծներու մէջ դուրս չ'ուրիշ չ'ունի. գոնէ ես չեմ ճանչնար:

Գ. Նարեկացիին մէջ մարդը միշտ մեղաւորն է. Աստուծոյ առջեւ մարդս իր մեղքերուն գիտակցութիւնը կ'ունենայ, իր փրկութեան բացարձակ անկարողութիւնը կը զգայ, իր դատապարտութեան մտածումովը կ'ապրի: Առանց Աստուծոյ՝ մարդս խեղճութիւն է միայն, աղտեղութիւն է, զգո՞ւմի, բոլոր մեղքերու պատասխանատուն: Նարեկացին ոչ մէկ մեղք իրեն օտար կը համարի: Ի՞նչպէս կրնայ դոյնալ, ուրեմն, հանդիպումը մարդուն եւ Աստուծոյ միջեւ: Ինչ որ Գրիգորի Նարեկը կը բնորոշէ՝ Աստուծոյ եւ մարդու հանդիպումն է Քրիստոսի մէջ: Հետաքրքրական է մատնանշելը՝ թէ Նարեկին Աստուծոյ, որուն Գրիգոր կը գիմէ, գրեթէ միշտ Քրիստոսն է: Աստուած է, բայց Աստուած մը որ մարդուս կը ներէ. ամենասուրբ Աստուածն է, բայց մօտեցած է մարդուն, աշխարհ եւ կած, մարդս քաշեր է իրեն, իր վրայ ու-

ղած է առնել աշխարհի մեղքերը, աղա-
տելու համար մարդս իր ամօթէն: Հան-
դիպումը, ուրեմն, առանց Քրիստոսի չի
գոյանար. Մարդեղութեան եւ փրկա-
գործութեան խորհուրդները՝ հիմը կը
կազմեն այս աստուածաբանութեան եւ
այս սիրոյն:


Բայց միայն Քրիստոս չէ, Քրիստոսին
հետ կան նաեւ բարեխօսները. Աստուա-
ծամայրը, սուրբերը. հանդիպումի վայ-
րը Եկեղեցին է: Չկայ բան մը որ ուղղա-
փառ եւ աւանդական չըլլայ. ինքնատիպ
է միայն՝ զգացումի խորութիւնը, մեղքի
սուր դիտակցութիւնը, անդամանելի
կործանումի ըմբռնումը: Մարդը կը զգայ
որ առանց Աստուծոյ օգնութեան, ա-
ռանց ներումի՝ իրեն ուրիշ բան չի մը-
նար՝ եթէ ոչ դատապարտութիւնը, մա-
հը: Մարդս ինքզինքը իր վերջինքին մէջ
կը գտնէ, իր առջեւ մա՛հը միայն կը տես-
նէ, և մահուան հետ դատաստանը. պատ-
մութենէն դուրս է արդէն, որովհետեւ
միմիայն եւ ուղղակի ամենասուրբ Աս-
տուծոյ ներկայութեան առջեւ դրուած կը
զգայ ինքզինքը: Այս հանդիպումին եւ
Աստուծոյ հետ այս յարաբերութեան մէջ,
պատմութեան եւ մարդկային կեանքին
ամէն ստեղծեալ արժէք՝ ոչինչին մէջ կը
զահալիժի. մարդկային բոլոր կեանքի
ամփոփոյքը դատաստանն է: Մարդս իր
ամէն գործին մէջ Աստուծոյ հետ իր հան-
դիպումը կ'իրականացնէ եւ ինքզինքը
դատուած եւ դատապարտուած կը զգայ.
մարդս ինքզինքը կ'ամբաստանէ ու կը
դատապարտէ: Բայց Աստուծոյ ներումը՝
չի պարունակեր միայն թողութիւնը յան-
ցանքներու, այլ կ'ընդգրկէ նաեւ արդա-
բութիւնը, Աստուծոյ հետ միութիւնը:
Աստուած՝ միայն յանցանքը չի թողուր,
այլ մարդը իրեն կը մօտեցնէ, իր մտե-
րութեան կը հրաւիրէ, իր բոլոր պար-
զեններուն մասնակից կ'ընէ: Ասիկա է
Նարեկին պարունակութիւնը:

Գրիգոր Նարեկացին իսկապէս ինքնա-
տիպ է ու եզակի, որովհետեւ անբաժան
է մարդոցմէ ու մարդիկը կը ներկայա-
ցնէ. բոլորին հետ ունեցած այս հոգե-

կան միութեան պատճառով, ինքզինքը
բոլոր մեղքերով յանցաւոր կը նկատէ.
մեղքեր՝ որոնք մարդկութիւնը գործած է
եւ կամ կրնայ գործել. ան բոլոր մեղքե-
րը գործած կը համարի, որովհետեւ Աս-
տուծոյ առջեւ ինքզինքը յանցաւոր կը
զգայ՝ անոնց նկատմամբ: Ընդհանրական
մեղքը կը զգենու:

Մարդկութեան հետ ունեցած այս սերտ
կապը կը ծաղի անշուշտ այն դիտակցու-
թենէն՝ որ մարդս Քրիստոսի մէջ չի՝ կըր-
նար անջատուիլ իր եղբայրակիցներէն ո-
եւէ մէկէ մը՝ առանց անջատուելու նոյն-
ինքն Քրիստոսէ: Արդեօք որոշ Պղատո-
նականութենէ՞ մըն ալ կը ծաղի այս դա-
ղափարը: Գուցէ չափազանցութիւն մըն
է ասիկա. դերքի քննութենէն՝ իմաստա-
սիրութեան գոնէ ուղղակի աղբեցութիւն
մը չի տեսնուիր, թէեւ այս կարելիու-
թիւնը բոլորովին մերժուելիք չէ:

Միւս կողմէն Գ. Նարեկացին քով
մարդու ըմբռնումը՝ նոյնն է Ս. Գիրքին
յատուկ ըմբռնումին հետ: Ս. Գիրքին
մէջն ալ Ադամ է բոլոր մարդկութիւնը եւ
բոլոր մարդկութիւնը Ադամն է: Ներշն-
չուած գիրքերուն մէջ, ինչպէս նաեւ ա-
րեւմտեան աւանդութեան մէջ, չկայ յըս-
տակ զանազանութիւնը անհատին եւ
մարդկութեան միջեւ: Ասիկա անդրա-
դարձուցած է Ս. Օգոստինոս սաղմոսնե-
րու մեկնութեան մէջ: Սաղմոսներու
«Ես»ը՝ իւրաքանչիւր մարդն է, բայց ա-
մէն մարդու մէջ, կայ նաեւ բոլոր մարդ-
կութիւնը: Ասիկա շիտակ է նաեւ Գ. Նա-
րեկացին համար: «Ես»ը որ կը խօսի՝
մեր արեւմտեան աւանդութեան անհատը
չէ. մարդն է. մարդս այնքան մարդ է,
որքան իսկապէս կ'իրադրծէ իր միու-
թիւնը բովանդակ մարդկութեան հետ:
Բայց եթէ մարդս իրադրծէ իր մարդկու-
թիւնը՝ այնու որ մէկ է ամէնուն հետ,
այն ատեն չի կրնար չիրադրծել իր ընդ-
հանրական պատասխանատուութիւնը: Ան
յանցաւոր կը դառնայ բոլոր մեղքերուն
պատճառով, եւ բոլոր մեղքերուն համար
պէտք է Աստուծոյ պատասխանէ: Աղբե-
ցիկ է Գրիգորին ամբաստանութիւնը:



A. Fetvajian - KRIKOR NAREGATZI

Ա. Ֆէթվաճեան - ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ

«Կենարարին յիշատակուն միշտ ճենճերիմ»: (Նարեկ, Բան ԺԲ)

Ոչ միայն դործած է բոլոր մեղքերը, այլ մեղանշած է բազմաթիվ անգամներ։ Այս բոլոր մեղքերը Աստուծոյ առջեւ կրնայ ամբաստանել միայն այն մարդը՝ որ կըրցած է իսկապէս իրազործել իր միութիւնը բոլորին հետ։ Այս պատճառով, Նարեկը՝ միայն Գրիգորին չի պատկանիր։ Քրիստոնեայ Հայաստանի համար դարձած է աղօթքի գիրքը։

Է այն գիրքը՝ որուն մէջ մարդը եւ բովանդակ մարդկութիւնը կը խօսի եւ ներուած մարդուն մէջ՝ կը ներուի բովանդակ մարդկութեան։ Ներումը որ ան կը հայցէ, չի հայցեր միայն իրեն համար, եւ ոչ ալ զայն իրեն համար միայն կ'իրականացնէ. այն վայրկեանին որ ան բովանդակ մարդկութեան անունով ինքզինքը ամբաստանելով երկնային ներում կը հայցէ՝ միաժամանակ իրեն հետ բոլոր մարդկութիւնն է որ ներում կը ստանայ եւ նորէն հաղորդակցութեան մէջ կը մտնէ Աստուծոյ հետ։ Ասիկա՝ ինծի հիմնական եւ կեդրոնական մտածումը կը թուի. դուցէ ամէնէն աւելի ինքնատիպ տարրը այս բանաստեղծութեան՝ որ անշուշտ ըզմայլելի է թէեւ քիչ մը չափազանցեալ։

Մեղքին դիմաց Աստուած է Այն՝ որ արմատական հակադրութեան մէջ է մարդուն հետ. հակադրութիւն մը արմատական եւ անհուն։ Ո՛չ էակի կարգին մէջ - սահմանաւոր եւ անհուն, ժամանակաւոր եւ յաւիտեական - էակի կարգին մէջ է՝ որ կը յայտնուի այս հակադրութիւնը. բարոյական կարգի մէջ է։ Գ. Նարեկացին ո՛չ Աստուած եւ ոչ ալ մարդ կը նկատէ բնութեան կարգին մէջ, այլ ճիշտ բարոյական կարգի մէջ։ Սրբութիւն, ուրեմն, եւ մեղք։ Մարդս՝ բովանդակ մարդկութիւնն է եւ մարդս Աստուծոյ առջեւ միայն իր դատաստանը կ'ապրի։ Մարդս գիտէ որ չի կրնար Աստուծոյ դատաստանէն փախչիլ՝ եթէ ինքնիր կողմէն ինքզինքը չամբաստանէ եւ ներում չհայցէ։ Այս պատճառով, փոխանակ դատաստանէն խուսափելու եւ Ազատ մին պէս ինքզինքը թզենիին տակ ծածկելու, կը ներկայանայ դատաստանին եւ

ինքզինքը կ'ամբաստանէ։ Կը զգայ որ կրնայ փրկուիլ՝ եթէ չփախչի Աստուծոյ հանդիպումէն, այլ ընդառաջ երթայ անոր, ինքզինքը ամբաստանելով եւ ներում ինքզինքով։ Քրիստոնէական հայեցողութեան հիմնական սկզբունքներէն մէկն է. «Փրկութեան սկիզբը՝ անձին ամբաստանութիւնն է», կ'ըսէ Ս. Եփրեմ։

Մարդս է որ ինքզինքը կ'ամբաստանէ եւ այս ամբաստանութեան պատճառով է որ Աստուծոյ մէջ փրկարար ողորմութիւն կը գտնէ։ Փրկարար ողորմութիւն կը գտնէ, որովհետեւ Աստուած մարդացած է, եւ մարդացած Աստուածը Գառնուկն է՝ որ աշխարհի մեղքերը կը թողու, Ան որ իր վրայ բեռնուցած է ընդհանրական մեղքը եւ զայն բնաջինջ ըրած իր մէջ։ Քրիստոսի մէջ ոչ միայն կը միանայ մարդկութիւնը եւ Աստուած, այլ կարելի է ըսել որ Քրիստոսի մէջ մարդս կ'աստուածանայ, ինչպէս Աստուած կը մարդանայ։ Այն մարդը՝ որուն մէջ բովանդակ մարդկութիւնը կ'ամբաստանուէր, ինքն է, Անմեղք։ Միթէ Աստուծոյ Որդին, Յիսուս Քրիստոս, նոր Ազամը չէ՞, Ան՝ որուն մէջ մեղքով քայքայուած մարդկութեան միութիւնը՝ կրկին կը հաստատուի։ Աստուծոյ դատաստանին ներկայացող մեղաւոր մարդը, ներուած է նոյն վայրկեանին, որովհետեւ տեսակէտով մը Քրիստոսի հետ կը նոյնանայ։

Պիտի չուզէի ըսել որ մարդս միաժամանակ թէ՛ սուրբ է եւ թէ՛ մեղաւոր, ասով հանդերձ Գ. Նարեկացին չի մոռնար երբեք մեղաւոր ըլլալը, ինչպէս երբեք չի մոռնար որ Աստուած ամենասուրբն է։ Բայց Աստուծոյ սրբութիւնը մարդս չի հեռացներ, մանաւանդ թէ անդիմադրելիօրէն իրեն համար մարդացած Աստուծոյ կը քաջէ։

Մարդս չի կրնար երբեք իր մեղքը մոռնալ, բայց Աստուծոյ առջեւ ներկայանալուն՝ ոչ մէկ բանի պիտի ծառայէր իր մաքրութիւնը եւ սրբութիւնը, որովհետեւ Աստուած յարաբերութիւն ունի մարդուն հետ՝ այնու որ փրկիչ է եւ կը փրկէ այն մարդը՝ որ պէտք ունի իր ներումին։

Ճիշտ ասիկա կ'ըսէ յիսուներորդ աղօթքը։

Զի զի՞նչ օգուտ է քեզ մաքրութիւնդ, եթէ ընդ փարիսեցոյն դատեսցիս, եւ կամ զի՞նչ վնասեսցես զիս պարտիքս, եթէ ընդ մաքաւարին գովեսցայց։

Քրիստոնեան ինքզինքը մաքսաւոր թէ փարիսեցի պէտք է նկատէ։ Եթէ կը զգաս որ արդէն իսկ փրկուած ես, եւ յանցանք չունիս՝ փարիսեցին ես. ներումի պէտք չունիս. ըսել է թէ մերժուած ես Աստուծմէ։ Իսկ եթէ ինքզինքդ ամբաստանես, ճիշտ այդ ամբաստանութեան մէջ կը փրկուիս, որովհետեւ ահա Աստուած քեզի կը ներէ։ Քրիստոնեայի իրական վիճակը, ուրեմն, ինքզինքը ամբաստանող մաքսաւորի վիճակն է, ոչ թէ յանցանքի զղացում չունեցող փարիսեցիին հոգեբանութիւնը։

Տպաւորիչ եւ անողորմ ամբաստանութիւններէն մին կը գտնուի Ի.Է. Ե. Ե. Ե. Ե. աղօթքին մէջ։ Մարդս կը սահմանուի յանցապարտ մը, լի բոլոր նուաստութիւններով, կիրքերով, նենգութիւններով։ Նարեկացին կը միացնէ միշտ մեղքի ամբաստանութիւնը՝ իր թշուառ վիճակի նկարագրութեան հետ. թշուառութիւն մը՝ որ հետեւանքն է մեղքին։ Կը զգայ որ իր ամբաստանումը եւ իր պատժապարտ վիճակին արտայայտութիւնը՝ միակ միջոցն են յոյսի, որովհետեւ միակ յոյսը ներումն է (Աղօթք ԿԵ, Ա)։

Բայց այս ամբաստանութեան մէջ դեռ չի խօսուի մեղաւոր մարդկութեան հետ ունեցած մարդու սերտ կապակցութեան մասին. սակայն միեւնոյն քերթուածին մէջ սուրբը յանկարծ կը բացազանչէ։

Զի որ գոյատիւն Ազատայ անձին իւրում ոչ գրեցէ, եւ գմեղս ամենից իմեան ոչ համարեսցի, իբր երջանիկն արքայից ըզհարցն, կորոյս զիւրն արդարութիւն՝ որ պէս անախտակի գոյ բնութեանս եւ ոչ բերկրի սիրտ առ գուարքութիւն երեսաց արեւտոօք յուսոյն, ըստ ասացելոյն, եթէ ոչ յառաքելոյն Քրիստոսի ուսեալ՝ ամենայնիւ ահա ըստ Աստուծոյ տրուեսցի։

Միակ ուրախութիւնը մեղի կը ծագի յոյսէն եւ թողութեան պարզեւէն։

Արդ ըզգալի է ինձ յաւիտ աստուծոյ խրատն իմն երբալ նստել ոչ յառաջին բարձին հպարտից ընդ ամբարշտացն նանրախորհուրդ ժողովելոց այլ ընդ գղջացեալսն սրտի պատկառեալսն մեղօք՝ եւ ի դատաստանաց մեծին պակուցեալ ահիւ հատուցմանն, յետնացն հաւասարեալ աստէն ի յերկրի կամալ խոնարհութեան, ուստի բարձրեալն Աստուած պարարեալ բերկրի. որով ընդ նախադասեալսն ի բազմականսն երանութեան համարակեցայց, քէ ես եւ քէ նա հետեւեալ սովիմբ։

Մեղաւորն ալ կը գտնուի նոյն ճաշկերոյթին մէջ Անոր հետ որ հրաւիրած է զինքը։

Արդ ես ճշգրիտ պատկեր ամենայն երկրի՝ զիմս խառնեալ ընդ նոցին պարտիս եւ ի նոցայոցն գառ իս դառնութիւն կըրկին առաւելեալ, նոօք հեծեծեցից. քէ պէտ եւ չէ ինչ պիտոյ գարշութեան գուռնոյ՝ դարձեալ տգեղութիւն։ Ահա արդ մեղայ զի անմտութեամբ գործեցի գոչ հանոյսն քո բազմօք սխալեալ յանցաւորութեամբք, նայեալ յիս, գրած, որպէս երբեմն յուրացութեանն ըմբռնեալ Պետրոս եւ գամեայն յամենայնի աւմեայնի քո կարողութեամբդ՝ գառաջին չարիսն միջնովքն եւ վերջնականօքն քող ինձ։

Նարեկացին իր կեանքի վերջի մասին դուցէ չի խօսիր. իւրաքանչիւր մարդու կեանքը, կեանքի ու բովանդակ մարդկութեան պատմութեան միեւնոյն տարածութիւնն ու չափն ունի։ Ամէն մարդ տեսակէտով մը բովանդակ մարդկութիւնն է. այս պատճառով իւրաքանչիւր մարդու կեանքը կը տարածուի ու կ'ընդգրկէ նոյն ինքն պատմութիւնը, Ազամի առաջին մեղքէն մինչեւ վերջին մեղքը, աշխարհի բոլոր անչափ յանցապարտութիւնը, Աստուծոյ դատաստանին կը ներկայացնէ, իրեն թէ իր յանցանքն ըլլար։ Միշտ այս ընդհանրական բախտակցութեան մասին կը խօսի ՀԲ. աղօթքին մէջ (բոլոր գիր-

քին մէջ չկայ աւելի նշանակալից կտոր մը այս մասին)։

Վկայեալ գանձնէ կամաւորական ստգր-տանք բիւր բամբասանաց անբժշկական մեղանաց ի սկզբնաւայրն սկսեալ մինչեւ ի սպառումն ծննդոց նորա՝ կամայական յանձնառութեամբ հաստեցի եղի զիս ամենայնիդ պարտական չարեաց։

Աւելին ալ կ'ըսէ, այսինքն, ով որ այսպէս չի զգար եւ ինքզինքը մեղքէ մը զերծ կը համարի՝ այնպիսին ամպարելտ է, որուն Աստուած չի ներեր։ Այդ մարդը ըսած կ'ըլլայ խօսքեր՝ որ իրեն չեն պատշաճիր, որովհետեւ նման հաւանութիւն մը կ'անջատէ զինքը իր եղբայրակիցներէն։ Ներումը բոլոր եղբայրակիցներով միասին պէտք է ստանայ։ Ինչպէս կարելի է եղբայրակիցներու հետ ներում ստանալ, երբ բախտակից չէ իրենց՝ միեւնոյն մեղքի ամբաստանութեամբ։

Բայց ես քանզի գիտողիմ Աստուծոյ մատնեալ եմ դատաստանի ոչ կերպարանեցայ տեսողին, ոչ կեղծաւորեցայ քննողին, ոչ ստեցից գոչ գործեցեալսն նկատողին...։ Ոչ ոք մեղաւոր իբրեւ զիս, ոչ ոք անօրէն, ոչ ոք ամբարիշտ, ոչ ոք անիրաւ, ոչ ոք չարագործ, ոչ ոք վրիպեալ, ոչ ոք սխալեալ, ոչ ոք մոլեցնեալ, ոչ ոք խարդախեալ, ոչ ոք շաղախեալ, ոչ ոք ամաչեցեալ, ոչ ոք դատապարտեալ։ Ես միայն եմ եւ այլ ոչ ոք։ Ես ամենայնիմ եւ յիս ամենեցուն։ Ոչ հեքանութ, զի ոչ գիտիմ. ոչ հրեայք քանզի կուրացան. ոչ սգեւտք եւ խառնիմադանք, քանզի յիմարք էին իմաստից։

Բայց ես ոչ, կը խորհրդածէ սուրբը. ես գիտեմ, եւ այս գիտութիւնը ինծի համար կը նշանակէ գիտակից ըլլալ ամբողջական պատասխանատուութեան մը. կը նշանակէ յանցանքներու անհունութեան իրադրոժումը, փրկութեան անկարելիութիւնը, էութեանս մէջ թափանցող ներումի մը անհրաժեշտութիւնը։

Կը կարծեմ որ այս տողերուն մէջ կը յայտնուի ամենաբարձր կէտը, ոչ իր բանաստեղծութեան, այլ իր հոգեւոր փորձառութեան, ինքը միութիւնն է բովան-

դակ մեղաւոր մարդկութեան՝ իրագործելու համար միութիւնը Աստուծոյ հետ, որ իր փրկիչն է։

Մեղքին հանդէպ ունեցած իր յարաբերութեան ըմբռնումն է որ զինքը մեծ անձ մը կ'ընէ աստուածաբանական գետնի վրայ. իր մեղքն է որ կ'ամբաստանէ, բայց մեղքն է նաեւ բոլորին. իր մէջ, ինչպէս ըսինք, բոլոր մարդկութիւնը ինքզինքը կ'ամբաստանէ. ան ինքզինքը մէկ կը զգայ մեղաւոր մարդկութեան հետ։ Ահա թէ ինչու իր ամբաստանութիւնը, ինչպէս տեղ մը բացայայտօրէն կ'ըսէ, բովանդակ մեղաւոր մարդկութեան ամբաստանութիւնը կը դառնայ եւ խօսուին կը մընայ Աստուծոյ դատաստանին առջեւ, մինչեւ աշխարհիս վերջը։ Կեանքն է, պատմութիւնն է աշխարհի, որ Աստուծոյ առջեւ ամբաստանութեան միակ ներդրութեան մը եւ աստուածային ողորմութեան պաղատանքի մը կը վերածուի։ Խօսքը աղաչանք է, պաղատանքի աղաղակ մը, մարդու լացը. կը տեսէ մինչեւ որ մարդս գոյութիւն ունի երկրիս վրայ, մինչեւ որ դեռ չէ եկած վերջը աշխարհիս։ Միայն այն ատեն ներում հայցող մարդուն ամբաստանութեան՝ պիտի յաջորդէ փրկութիւնը։ Այս պատճառով, ահա այս աստուածաբանութեան միւս հիմնական տարրը. մարդս ինչպէս որ բախտակից է մեղքին, նոյնպէս բախտակից է ընդհանրական ողորմութեան։

Մեղքի ընդհանրական համբերաշխութեան դիմաց, Աստուծոյ ողորմութիւնը կը կանգնի եւ նոյն ընդհանրականութիւնն ունի։

Արդ դու ստացար գամբնեսեան եւ քո ամենեւեմեան եւ ողորմեսցիս ամենեցուն, միայն բարեգութ։

Մէկ կողմէն մարդկութիւնը ապրող մեղք մըն է. մարդս ինքզինքը պատասխանատու կը զգայ այս մեղքին. միւս կողմէն Աստուած Իր անհուն ողորմութեամբ բոլորին կը ներէ ու ամէնքը կը փրկէ։ Ինչպէս հակապատկեր մը կայ մարդու եւ Աստուծոյ միջեւ, նոյնպէս հակապատկեր մը կայ ընդհանրական

խեղճութեան եւ ընդհանրական ողորմութեան միջեւ։ Ներկայ աշխարհը՝ մեղքի աշխարհն է, բայց անոր մէջ պիտի մտնէ Աստուծոյ աշխարհը՝ որ աշխարհն է թողութեան եւ որմէ ոչ ոք պիտի զրկուի։

Կրնա՞նք ընդունիլ այս տեսութիւնը. ուղղափա՞ռ է ամբողջապէս։ Ես կը կարծեմ որ թէեւ Գ. Նարեկացին քիչ անգամ մեղի ներկայացնէ դայն եւ քիչ անգամ յստակ կերպով մատնանչէ, ինչպէս վերոյիշեալ տողերուն մէջ կը մատնանչէ մեղքի համբերաշխութիւնը, սակայն այս տեսութիւնը միշտ լուեայն գոյութիւն ունի իր աղօթքին մէջ. ամբաստանութեան՝ ներումը կը համապատասխանէ, բոլոր մեղքերու ամբաստանութեան՝ բոլոր մեղքերու ներումը։

Բայց վերը ըսի, ուղղափա՞ռ է այս տեսութիւնը. հարցը բաւական ծանր է։ Մենք գիտենք որ իբրեւ կաթողիկէ պէտք է դժոխքին հաւատանք. սակայն արեւելքի մէջ, Որոգինէսէն ետք, միշտ շարունակուած է թաքուն աւանդութիւն մը՝ որ ընդհանրական փրկութեան մասին կը խօսի։ Որոգինէսէն յետոյ, Գ. Նիւսացին, հայրախօսական շրջանին ամենամեծ հայացողը. իրմէ յետոյ Մաքսիմոս Խոստովանողը։ Կոստանդնուպոլսոյ Ժողովը՝ հաւատքի մաս սահմանած էր յաւիտենական դատապարտութիւնը, թէեւ երկդեմի բացատրութիւններով, բայց յստակ էր վարդապետութեան վերաբերող մասին մէջ։

Աւանդութիւն մը այս ընդհանրական փրկութիւնը կը շեշտէ։ Վարդապետութիւն մըն է այսիկա, թէ յոյս մը։ Յոյս թիւն մըն է ասիկա, թէ յոյս մը։ Յոյս Գ. Պարթի աստուածաբանութեան այնքան ողբերգակ եւ այնքան մեծ տեսութիւնը։ Ինծի կը թուի որ Գ. Նարեկացի թիւնը։ Ինծի կը թուի որ Գ. Նարեկացի Աղօթադիրքը մեղմէ հաղարաւոր տարիներով հեռաւոր կրօնական փորձառութեան մը վկայութիւնն ըլլայ։ Չենք կըրնար մենք մեղ գաղափարակից զգալ մարդու մը հետ՝ որուն զգացումը այս աղօթքներով կ'արտայայտուի, գոնէ ես այսպէս կը կարծեմ։ Եւ սակայն այսօր Կ.

Պարթ կարծէք կ'արդարացնէ Գ. Նարեկացիին կրօնական փորձառութիւնը։ Նորէն կը կրկնեմ. ուղղափա՞ռ է այս տեսութիւնը. կրնանք ըսել թէ ոչ-ուղղափառ է, որովհետեւ Նարեկացին երբեք ուղղակի դժոխքի վարդապետութեան հաւատակ չ'արտայայտուի, սակայն աղօթքին մէջ անդրդուելի յոյս մը կ'արտայայտէ, եւ այդ յոյսը որով ոչ ոք կըրնայ դատապարտուիլ՝ պարտաւորիչ կը դառնայ։ Եթէ պատիժին յաւիտենականութիւնը պէտք ես ընդունիլ, կրնաս ու պէտք ես ներումին ընդհանրականութիւնը պէտք ես ընդունիլ, կրնաս ու յոյսը կը հիմնուի Քրիստոսի փրկագործութեան վրայ. ասիկա չենք կրնար հաստատել իբրեւ վարդապետութիւն մը, կրնանք արտայայտել իբրեւ յոյս մը։ Հետեւաբար իրական կերպը որով կարելի է նման աւանդութիւն մը ներկայարեւելի է նման աւանդութիւն մը ներկայարեւելի՝ աղօթքն է որ գործնականին մէջ յոյսի ձայնն է։ Խոնարհ յոյսը անձին որ Ողորմութեան կ'ապաւինի, եւ դայն աշխարհի մեղքերէն աւելի մեծ կը դասէ։

Եթէ Նարեկի գիրքին հիմնական առաջին տարրը ընդհանրական մեղքի մը գիտակցութիւնն է, երկրորդ տարրը յոյսն է առ Աստուած որ կը սիրէ, եւ սահման է առ Աստուած որ կը սիրէ, եւ սահման է զներ սիրոյն, մարդուն մեղքը արգելք չի նկատեր։ Այս տարրը կ'արտայայտուի եւ առաջ կարեւոր է Աստուծոյ անուններու մասին անդրադառնալ։ Եթէ մարդս ինքնիրեն մեղաւոր է, Աստուած՝ միայն Անտեսանելին, Անմերձեանին, Անհունը չէ։ Աստուծոյ անունները միշտ յարաբերութիւն մը կ'ըսեն մարդուն. մարդու հանդէպ Աստուծոյ յարաբերութիւնը կ'արտայայտեն։ Աստուած կեանքի պարգեւիչն է, փրկիչը, բժիշկը, լոյսը՝ որ կը լուսաւորէ, ոյժը՝ որ կը զօրացնէ... Աստուած մըն է՝ քեզի՜ համար։

Նարեկացին երբեք չի յոգնիր Աստուծոյ անունը գովելէ, եւ իր Աստուածը Յիսուս է։ Չարմանք կ'ազդէ Աստուծոյ անուններուն ճոխութիւնը, որոնցմով զինքը կը բարեբանէ ու զինքը կը կանչէ

(Հմմտ. Աղօթք Գ. Ա., ԺԹ. Ա., ԻՆ. Դ., ԼԲ., ԾԷ. Ա., ԿԷ. Ա., ՀԱ. Դ., ՀԳ. Գ., ՂԳ. Ա...):

Աստուած կը փրկէ, կ'ազատէ, կեանք կը պարգեւէ: Եթէ քրիստոնէական կեանքի ապրումը՝ կախում ունի Աստուծոյ մարդու հետ ունեցած յարաբերութեանէն, ապէս կը հետեւի բնականաբար որ դրական տարրը նոյն ընդարձակութիւնը կը կրէ, մանաւանդ թէ աւելի է քան մեղքին ծաւալը: Եթէ մեղքը կը կործանէ, ո՞րքան աւելի մեծ է Աստուծոյ զօրութիւնը, որ կը բռնէ. Նարեկացին Աստուծոյ փրկարար սիրոյն գերազանցութիւնը կը մատնանշէ. գերազանցութիւն մը բաղդատմամբ մեղքին, որ կը խանգարէ ու կը խառնակէ ստեղծագործութիւնը: Այս դրական բաժինին մէջ ոչ թէ մարդուն, այլ Աստուծոյ գործը կը յայտնուի. եւ Աստուծոյ գործը՝ կը յաղթէ մարդու գործին: Աստուած կը յայտնուի ճիշտ իր գործին մէջ, եւ Աստուծոյ գործը՝ փրկողութիւն է, փրկութիւնն է, սէրն է: Հետեւաբար Աստուծոյ գործը մեղքի պատճառած աղէտէն դեռ աւելի մեծ է:

Քրիստոնէական կեանքի դրական տարրի մասին քիչ կը խօսի, մանաւանդ թէ հազիւ կ'ակնարկէ: Նարեկացին կարծէք չ'ուզեր աւելի ընդարձակօրէն խօսիլ՝ Աստուծոյ հետ մշակած իր ներքին կեանքի մասին: Այս ներքին կեանքի ապրումին հիմը կազմողը իր մէկ տեսիլքն է կարծէք, զոր չի նկարագրեր եւ միշտ թաքուն կը պահէ, երբեմն երբեմն գերբին մէջ ակնարկելով հանդերձ այդ մասին:

Իր մէջի Աստուծոյ ներկայութեան ապրումին կը մասնակցի, բայց չնորհի ապրումը իրեն համար ի վերջոյ դրաւական մըն է, կանխում մը երկինքի կեանքին: Այս մասին շատ չ'ակնարկէր, որ պէտքի յոյսը երբեք չնուազի: Փրկութեան աշխարհը, աշխարհ մըն է որ միայն յետոյ պիտի յաջորդէ մեղքին եւ ահոր հետեւանքներուն՝ որ աղէտ ու մահ է:

Ընդհանրական մեղքի գրեթէ ապշեցնող տեսութեան բաղդատմամբ՝ քիչ են այն մասերը՝ ուր սուրբը Աստուծոյ ազդեցիկ

միջամտութեան վրայ խօսի. յոյսն է որ տեսակէտով մը արդէն իսկ կը կանխէ գալիք արքայութիւնը: Այս քիչ հատուածներն ալ, սակայն, բաւարար են մեզի տալու քրիստոնէական կեանքի վարդապետութիւն մը, ոչ իբրեւ մեղքի լսկ ճանաչում մը եւ ամբաստանութիւն մը, ոչ պարզ փորձառութիւն մը մեղքին բերած աղէտին ու մահուան. Աստուծոյ կեանքին դրական ապրումը՝ ապրումն է նաեւ չնորհին:

Արդ համարեա յարգարութիւն անյուսալի փրկութեան հոգւոյս գամեմալարանն ալ կողկողանաց սրտիս հեծութեան, ընդ նախագրեւոյն երջանկաց եղեալ եւ դասեալ գայս դաւանութիւն փոքր հաւատոց իմոյս խնդրուածոց. զի կեցից եւ եւ նոֆօք բերկրեալ ընդ նոսին, բուռն հարեալ քան զիմոց գործոց գոյոյ շնորհաց: Մանաւանդ զի կրկին բարձուեմ եմ եւ փառաւորք եւ քան զհափ կշռութեան բանի գերագոյն, իմումս խոսովութեան հաշտարանի եւ հոգրապէս քաւարանի եւ կարծեաց քերութեան մտաց սլացեալք. ընդ արեան քո ահաւորի եւ ըստ մարմնոյ ծնողդ քո խնկելի. պարք առաքելոցն, դասք մարգարէիցն, գունդք մարտիրոսացն...

Միայն չարին մէջ ընկղմող մեղապարտ մարդկութիւնը չէ որ գոյութիւն ունի. կա'յ նաեւ մարդկութիւն մը որ կը քալէ, կը բարձրանայ Քրիստոսի արիւնով սրնած, Աստուծոյ չնորհէն մղուած, դէպի երկնային հայրենիք. սուրբը կ'աղօթէ.

Ան շարժումն անձին յիշատակ Աստուծոյ, առ փոփոխումն գարշապարի, առ կարկառումն աջոյ եւ ամբարձումն բագկի, առ բարիս գոհութիւն եւ առ գրեւ աղաչանք, առ բանն ընտանիս, առ խօսս հասարակաց, առ ձայնս բնաւորական, առ գործոց յաջողութեան, առ առաքինութեան ջերմութիւնս որ ի տուրմքեան եւ ի գիշերի՝ ընթացմունս օգտակարաց հոգեւորաց՝ քեւ առաջնորդեալք. ի նիքիել եւ ի գարբնուլ, ի պատերազմի ազգաց, ի մարտս դիւաց, ի հակառակութիւնս հերձուածոց, առ փոփոխումն, առ մեծա-

մեծս, առ ձգումն ըմպելեաց, եւ փաշալումն կերակրոց եւ որ ինչ միանգամ ի կիրս մեր կերպանան, եթէ հեշտականս, եթէ տառամանիս (ԼԱ):

Նարեկացին համաձայն յատկապէս Ս. Հաղորդութիւնն է որ մեր փրկութիւնը կ'իրագործէ:

Ս. Հաղորդութեան կախում ունի քրիստոնէական կեանքի կենսունակութիւնը: Ս. Հաղորդութեան ազդեցութիւնը աւելի մեծ է քան մարտիրոսութեան ազդեցութիւնը. ասիկա կը հետեւի հաւատացեալի մը խօսքերէն՝ որ Նարեկացին կը մէջբերէ իր ԾԳ. աղօթքին մէջ.

Հաւատալ գիտու եւ գերջանկութիւն, քան քէ մարտիրոսութեամբ իսկ...: Իսկ գանձառութիւն խորհրդոյս այսու դիտեցի դաւանէր իսկոյն, որ զի եւ մաքրոցն անձինք առանց նուիրման այսր յիշատակի չեւ եւ իսկապէս կատարեալք ի սպառ, եթէ ոչ ընդ այսր հրաշակերտութիւնս մեծութեան հոգւով խառնեցին:

Ս. Հաղորդութիւնը կը գերազանցէ բոլոր մարդկային գործերը, մարդկութեան բոլոր սրբութիւնները եւ նոյնիսկ մարտիրոսութիւնը: Նարեկացին ալ կ'անդրադարձնէ որ ասիկա քիչ մը չ'ափազանցուած վարդապետութիւն մըն է. աւանդութեան նկատմամբ ալ նոր է: Բայց, ի վերջոյ, Ս. Հաղորդութեան չնորհք՝ կարելի չէ՝ բաժնել մարտիրոսութեան եւ սուրբ կեանքի մը չնորհքէն, որովհետեւ սրբութիւնը եւ մարտիրոսութիւնը իսկական մասնակցութիւն մըն են խորհուրդին. ուրիշ բան չեն կրնար ըլլալ, եթէ ոչ չնորհք մը Ս. Հաղորդութեան մասնակցութեանէն բխած: Եթէ ըսելու կերպը քիչ մը չ'ափազանցուած կը թուի, սակայն Գ. Նարեկացի Ս. Հաղորդութեան խորհուրդի ոյժի մասին կ'աղմած հաւատքը կը բացայայտէ մեզի:

Հայեցողութեան հրահանգումը ոչինչ կ'արժէ, անշուշտ, եթէ ուղենք Ս. Հաղորդութեան չնորհքին հակադրել. բայց, զորդութեան չնորհքին հակադրել կատարեալ միթէ՝ մարտիրոսութիւնը կատարեալ մասնակցութիւն չէ՞ Ս. Հաղորդութեան խորհուրդին: Մարդու մարտիրոսութիւնը

նը ոչինչ պիտի արժէր, եթէ Քրիստոսի մահուան մասնակցութիւն մը չ'ըլլար եւ միւս կողմէն մարդս ոչինչ կրնայ աւելցնել Քրիստոսի մահուան եղելութեան: Մարդու սրբութիւնը արդէն ուրիշ բան չէ, եթէ ոչ խորհուրդի մասնակցութիւն մը: Հետեւաբար զանազան տեսակէտներով Գ. Նարեկացի ըսածը շիտակ է եւ այս վարդապետութիւնը մեզի կը սորվեցնէ թէ առանց Յիսուսի փրկարար գործին՝ ոչ հայեցողութիւն եւ ոչ ալ քրիստոնէական միութեան կեանք գոյութիւն ունի:

Մեր սրբութիւնը մասնակցութիւն մըն է ի'ր սրբութեան, մեր կեանքը մասնակցութիւն մըն է ի'ր կեանքին, մեր մահը մասնակցութիւն մըն է ի'ր մահուան, եւ մասնակցութիւն մըն է ի'ր ժողովը կը կատարուի: խորհուրդներն անշուշտ մոգական գործեր չեն որ մեր գործակցութիւնը չ'ափազանջեն. մանաւանդ թէ կը գրբդեն ու գործի կը մղեն: Այսպէսով ծիսական խորհուրդի մասնակցութիւնը՝ կը պահանջէ եւ կ'իրականացնէ Յիսուսի մարդու կերպարանակցութիւնը: Այսպէս մարդու կերպարանակցութիւնը՝ կը գրէ Գ. Նարեկացին իր զանազան ուրիշ հատուածներուն մէջ՝ ուր Քրիստոսի հետ մարդուն միութիւնը իրականացնող Ս. Հաղորդութեան ոյժը կ'արտայայտէ:

Եւ ընկալ գցող ողբերգութեան լալոյ արտասուաց աչացս ցանկապիլի՝ յանաւատ ոտս մարդեղութեան քոյ, Քրիստոս, եւ օրինակաւ խորհրդոյ հեռաց կնոջն յանցաւորի՝ գառ քեզ դարձն եւ զդաւանութիւն եւ համբուրի շրթանցս առ փաշակ փրկութեան կենացդ հաղորդութեան՝ հաւաքնապէս գանձակ միութիւն եւ ըզնոյն գրութիւն նորին ողորմութեամբ ընկալեալ ի քեզն:

Քրիստոսի հետ աստուածային այս միութիւնը՝ կեանք է եւ մեղքի մահուան հակադրութեամբ կը նկարագրուի: Ներումը ոչ միայն մեղքը կը ջնջէ, այլ ահոր հետեւանքներն ալ կը սրբէ, չարը կը խափանէ: Մութ է իր, հիմա լուսաւոր կ'ըլլաս, տկար է իր, զօրաւոր կը դառ-

նաս. մահամերձ էիր եւ արդէն կը նե-
խէիր, բայց հիմա կենսունակ կը դառ-
նաս:

Կարծեմ թէ Նարեկացին աստուածային
կեանք պարզեւոր խորհուրդները կը նը-
կատէ իբրեւ վերադարձ մը Դրախտի,
անմեղ վիճակի գեղեցկութեան: Գեղեց-
կութիւն, մաքրութիւն, լոյս, միութիւն
մարդուն՝ որ այլեւս հոգիի եւ մարմինի
պայքարը գերազանցած՝ Աստուծոյ հետ
միացած կ'ապրի, եւ Անոր կենդանի պատ-
կերն է:

Մարմինը նորէն հոգիին կատարեալ օ-
ժանդակը, եւ անոր ներքին կեանքին հա-
յելին կը դառնայ: Բայց այս ամէնը (թէ-
եւ հարկ չկայ շեշտելու) չ'իրագործուիր
եթէ ոչ Քրիստոսի մէջ եւ իրեն նմանակե-
ցութեամբ: Կորսուած դրախտը չենք վե-
րադառնար, չենք վերադառնար անմեղ
Ադամին նմանելու: Կեանքը՝ Քրիստոսի
նմանութիւն է: Այս հոգեւոր կեանքի բո-
լոր արտայայտութիւններու մէջ՝ Գ. Նա-
րեկացին նկատել կու տայ յատկապէս
հոգեկան ոյժը՝ որ ներքին կեանքի հիմ-
նական փորձառութիւններէն մին կը հա-
մարուի:

Հիմա մարդս ինքզինքը ազատ ու ան-
կաշկանդ կը զգայ. կը զգայ որ ամէն բա-
նի կարող է, արտաքին օրէնքի մը ենթա-
կայ չէ այլեւս: Մարդիկ չեն կրնար կե-
ցնել իր ընթացքը, ոչ մարդիկ եւ ոչ ալ
տիեզերքը կրնան արդելը հանգիստնալ ի-
րեն. տիեզերքն անգամ հլու է Սուրբի
կամքին: Այս տեսութիւնը մենք Ս. Պո-
ղոսին քով կը գտնենք. «Ամենայնի կա-
րող եմ այնու որ զօրացոյցն զիս»: Այս
ներքին ոյժի զգացումը յաճախ կը կրկե-
նուի Գ. Նարեկացիի աղօթքներուն մէջ:

Քանզի ուր փառքիւն է քագաւորե-
ալ՝ վտարեալ են մեղք, եւ ի խրախոյս
կենդանի բանիդ՝ ոչ է յուսահատութիւն,
եւ ամբարձեալ քոյոցդ շնորհաց՝ հալա-
ծեալ են պարտիքն եւ մերձ գոյով ձեռնիդ
Աստուծոյ՝ ոչ քոյ անհնարութիւն, այլ
ամենեւին յուսաւորութիւն բովանդակա-
պէս գորութիւն. անպարտելի կարողու-
թիւն (Աղօթք ԽԹ, Գ):

Եւ կը շարունակէ.

Հրամայեա, գրած, խնամակալ, գո-
վեալ, լոյս անշիջանելի, գորութեամբ
անսահմանելաւ, զի նոր հաստատեցի
գոյութիւն բնութեանս մարմնեղէն յարկի
անդամոցս. յորում հանգուցեալ անլա-
նելի բնակեցես բազմեալ ախորժ տեմ-
չանօք՝ միութեամբ հոգւոյս իմ ընդ քեզ
գապականութիւն մեղացս մերժեալ ի ըս-
պաւ՝ յանարատութիւն զիս պատրաս-
տեցես... (Աղօթք ԶԸ, Գ):

Աստուծոյ անհուն զօրութիւնն է որ
մարդուն բնութիւնը կը նորոգէ. այս բո-
լոր ընթացքին վախճանը, իրականացու-
մը ամբողջական փրկութեան՝ մարդուն
համար պիտի կալանայ շնորհքի միջոցով
ըլլալու՝ ինչ որ Աստուած է բնութեամբ.

Որ յամենայն վայրի կացուցեր զխո-
րանն վկայութեան արեան քո ուխտի...
մկրտութեան, յարութեան, նորոգու-
թեան, առ քեզ ընտանութեան, ընդ Հոգ-
ւոյդ սրբոյ միութեան, փառութեան, ա-
գատութեան, լուսաւորութեան, մշտնջե-
նաւոր մաքրութեան, իսկապէս երանու-
թեան, ընդ վերնայնոցն կցորդութեան,
անկապուտ փառաց ի շրթունս մեր ձայ-
նի բարձրելոյն հաշտեցուցիք բանից ա-
ղաչանք: Եւ գոր ահաւորն է ասել, կար-
գեմ աստանօր յիշատակ եղեալ մեծիդ ե-
րախտեաց, աստուած իսկ լինել ընտրու-
թեամբ շնորհին եւ ընդ հաստողիդ միա-
նալ տէրունի մարմնոյդ ճաշակմամբ, եւ
ընդ լուսոյդ կեանաց խառնութեամբ գոր
կատարումն երջանիկ խոստմանն, ըստ
Պօղոսի Բանին, ոչ ունէր օրէնն (Աղօթք
ԾԲ, Բ):

Գ. Նարեկացիին քով կը գտնենք միու-
թեան կեանք մը՝ որ զլիաւորապէս բա-
րեկամութեան եւ սիրոյ յարաբերութիւն
մըն է: Բացառիկ են այս մասին հատ-
ուածներ: Մարդը մարդ կը մնայ, բայց
հիմա Աստուծոյ բարեկամն է, ինչպէս
Աստուած՝ բարեկամ դարձած է մար-
դուն: Այլաձեւում է եւ շնորհքի միջոցով
մարդուն կերպարանափոխութենէ մը ա-
ւելի՝ Գրիգոր Նարեկացիի հայեցողու-
թիւնը յարաբերութիւն մըն է սիրոյ՝ որ

մարդս Աստուծոյ կը միացնէ, Աստուածն
ալ մարդուն, անբաժանօրէն:

Գ. Նարեկացիի ԺԲ. Նշանաւոր աղօթ-
քը կարծէք այն հատուածն է՝ ուր հեղի-
նակը իր հայեցողական փորձառութիւնը
կը պարզէ ուղղակի մեր առջեւ. փորձա-
ռութիւն մը գուցէ ո'չ այնքան բարձր,
սակայն սիրոյ կենդանի եւ խօսուն վկա-
յութիւն մը:

Իսկ ես ոչ միայն կարդամ, այլ նախ
հաւատամ մեծութեան նորին. ոչ եթէ
վասն պարգեւաց նորա մատուցեալ յոյժ
դեգերիմ, այլ իբր գկեղանութիւն իս-
կապէս եւ զնչոյ տուրեաւորութիւն հա-
ւաստի, առանց որոյ ոչ է շարժողութիւն
կամ ընթացութիւն. զի ոչ այնքան յու-
սոյն հանգուցիւ, որքան սիրոյն կապա-
նօք բերիմ: Ոչ ի տուրսն, այլ ի տուողն
յաւէտ կարօտիմ. ոչ փառքն եմ ինձ անձ-
կալի, այլ փառաւորեալն է համբարելի-
նչ կենացն փափաքանօք, այլ կենարարին
յիշատական միշտ ճենճերիմ. ոչ վայե-
լիցն տարփանօքն հեծեմ, այլ հանդեր-
ձողին տննչանօք յերկայանաց աստի կա-
կանիմ. ոչ զհանգիստն խնդրեմ, այլ ըզ-
հանգուցչին գերեսս աղաչեմ. ոչ հարս-
նարանին խնոյնիւք, այլ փեսային անձ-
կութեամբ մաշիմ: Ի ձեռն որոյ գորու-
թեան վստահապէս ակնկալութեամբ վե-
րագրեցեալդ յանցանօք բեռանց՝ աներկ-
միտ յուսով հաւատամ՝ ի կարողին ձեռն
ապաստանեալ, ոչ փառութեան միայն

հասանել, այլ գնոյն ինքն տեսանել՝ յո-
ղորմութիւն եւ ի գրութիւն եւ յերկնիցն
ժառանգութիւն, քեպէտ եւ յոյժ եւ տա-
րագրելի (Աղօթք ԺԲ):

Մեր ուսումնասիրութեան լրանալուն՝
պէտք ենք նորէն յիշել այն կէտը՝ որուն
ակնարկեցինք եւ որ շատ յաճախ կը կրկե-
նուի. տեսիլքի ակնարկը: Նարեկացիին
կարծէք Քրիստոսի տեսիլքը ունեցած է:
Իր բոլոր հոգեւոր փորձառութիւնը կար-
ծէք այս տեսիլքին կը բխի. տեսիլք մը,
սակայն, որ երբեք բացայայտ նիւթը չէ
եղած իր երդին, այլ լուելեայն: Քրիստո-
սի հետ այս հանդիպումն է որ Նարեկա-
ցիին տուած է անդրդուելի յոյսը Աս-
տուծոյ ողորմութեան վրայ, իր գոյու-
թեան ամբողջական նուիրումով՝ Սիրոյ
զօրութեան՝ որ ամէնքը կը փրկէ ու կ'ա-
զատէ. յոյս մը անդրդուելի, հակառակ
մարդկային մեղքին ահաւոր ներկայու-
թեան, հակառակ մարդկային թշուա-
ռութեան տխուր փորձառութեան:

Նարեկացիին ճանչցաւ սէրը. մանաւանդ
թէ Քրիստոսի տեսիլքը իրեն ոյժ պար-
գեւեց ոչ միայն չարի ընդհանրական տե-
սութեան համբերելու, այլ այդ իրակա-
նութիւնը իր վրայ առնելու եւ Աստու-
ծոյ առջեւ ինքզինքը ամբաստանելու:

Տ. ՊԱՐՍՈԹԻ

(Թարգմանեց՝ Հ. Գ. Ս.)

Տիվոյ Պարսոթի ծնած է Փալայիա (Խալիսա)
1914 Սպրիլ 25ին: 1937ին քահանայ օծուած է:
Զեռնարութենէն անմիջապէս ետք, ուսուցիչ ե-
ղած է Միխիլիսի կղերանոցին: Վերջին պատե-
րազմէն յետոյ, Ֆրիւնցէ քաղաքին մէջ հաստա-
ուած է: Մէկէ աւելի կրօնաւորական տուններու
առաջնորդութիւնը ստանձնած է. հիմնած է Նաեւ
կրօնաւորական զանազան հաստատութիւններ՝ հա-
յեցողական կեանքի պատկանող. ներկայիս Իտա-
լիոյ Ֆրիւնցէ քաղաքին կղերանոցին մէջ աստու-
ծաբանութիւն կը դասաւանդէ:

Իր գլխաւոր գործերէն յիշենք. Քրիստոնեա-
կան խորհուրդը եւ Աստուծոյ խօսքը, 1954 (Քրան-
սերէնի, գերմաներէնի, լեհերէնի, սլոնեմերէնի
թարգմանութեամբ): Սիրոյ յայտնութիւնը, 1954

(Քրանսերէն եւ սլոնեմերէն լեզուներով թարգման-
ուած): Անշարժ փախուստը, 1957 (գերմաներէն,
ֆրամիլիկ եւ Քրանսերէն լեզուներով թարգման-
ուած): Սիրոյ խորհուրդը եկեղեցւոյ Հայրերուն
քով, 1963: Աստուած մէկ է, 1965 (Քրանսերէնի
թարգմանութեամբ): Մտիկ քրէ, որդեալ, 1965:
Խորհրդածութիւններ Յայտնութեան գիրքին վրայ,
1966 (սլոնեմերէնի թարգմանութեամբ): Խորհրդածու-
թիւններ եկեղեցւոյ գիրքին վրայ, 1960, 1967 (սլոնե-
մերէնի, Քրանսերէնի թարգմանութեամբ): Եկեղեցւոյ
խորհուրդը աստուածային պաշտամունքին մէջ,
1967: Խորհրդածութիւններ Սովորական գիրքին
վրայ, 1967: Քրիստոնեական գոյութիւն, 1967:
Հաւատքը սիրոյ մէջ, 1968: Խօսք եւ լուսնիւն,
1968: